ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 110

25 մարտ 2019թ.

24:00-ԻՑ ՀԵՏՈ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 962 որոշման պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.<<ՄԱՆՈՒ>> Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /գործունեության հասցեն՝ ք.Ծաղկաձոր, Միեր Մկրտչյան փողոց, թիվ 14/, տրամադրել 2019 թվականի ընթացքում ժամը 24:00-ից հետո շահումով խաղեր կազմակերպելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 111

25 մարտ 2019թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169[1]-րդ հոդվածի 2-րդ մասով 219[1]-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչական հանձնաժողովի 2019 թվականի մարտի 25-ի թիվ 6 նիստի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Էլիսա Ռեզորտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /ՀՎՀՀ 03019589, հասցե՝ / նկատմամբ՝ գույքահարկի և հողի հարկի հաշվարկը սահմանված ժամկետում տեղական ինքնակառավարման մարմին չներկայացնելու համար, նշանակել վարչական տուգանք 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում Ծաղկաձոր համայնքի բյուջե՝ 900125002114 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրը:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
5. Վճարումը սահմանված ժամկետում չիրականացնելու և որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում գումարը կգանձվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 112

25 մարտ 2019թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 04 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N 165-Ն հրամանով հաստատված հավելվածի 8-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2013 թվականի հունվարի 18-ի <<Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի հաստատման մասին>> թիվ 04 որոշման թիվ 16 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 113

28 մարտ 2019թ.

ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշման 22.1. և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ծաղկաձոր համայնքում Ասյա Գուրգենի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող, (ըստ Հայկական ՍՍՀ բնակարանային-կոմունալ տնտեսության մինիստրության բնակարանային տնտեսության գլխավոր վարչության հանրապետական տեխնիկական գույքագրման բյուրոյի անհատական բնակելի շենքի և հողատարածության տեխնիկական պասպորտի՝ տրված 1990թ. հուլիսի 27-ին) իր կողմից փաստացի օգտագործվող 0,01795 հա մակերեսով հողամասին և 208,97 քառ.մ ընդհանուր մակերեսով շինություններին տրամադրել հասցե Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր Չարենցի փողոց թիվ 21/1:

2.Օրինականացնել Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր Չարենցի փողոց թիվ 21/1 հասցեում գտնվող, Ասյա Գուրգենի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տան 121,32 քառ.մ արտաքին մակերեսով կցակառույց մասը:

3.Քանի որ շինությունը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը նրա օրինականացման համար վճար չի գանձվում:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 114

28 մարտ 2019թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 11 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2019 թվականի հունվարի 17-ի <<<<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2019 թվականի ծախսերի և եկամուտների նախահաշիվները հաստատելու մասին>> թիվ 11 որոշման թիվ 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 115

28 մարտ 2019թ.

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Առևտրի և ծառայությունների մասին> օրենքի 17-րդ հոդվածով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ստեղծված աշխատանքային խմբին՝
Խմբի ղեկավար՝ Գարիկ Բաղալյան,
Անդամներ՝ Արմեն Արշակյան,
Արա Մեսրոպյան,
Լեյլի Խաչատրյան
Արփինե Ավետիսյան

տալ հանձնարարագիր՝ առևտրի և ծառայությունների ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հսկողություն իրականացնելու կարգի համաձայն, օրենքով վերապահված իրավասությունների շրջանակներում 2019 թվականի մարտի 28-ից մինչև մարտի 29-ը իրականացնել հսկողության միջոցառումներ հետևյալ կազմակերպություններում և անհատ ձեռնարկատերերի մոտ՝

1) <<Սամռեստ>> Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն - 2019 թվականի մարտի 28,

2) <<Վայն Սթոր>> Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն - 2019 թվականի մարտի 28,

3) <<Ցասաման Թիմ>>Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն -2019 թվականի մարտի 28,

4) Անհատ ձեռներեց Անժելա Պողոսյան- 2019 թվականի մարտի 28,

5) Անհատ ձեռներեց Արտյոմ Գալստյան- 2019 թվականի մարտի 28,

6) Անհատ ձեռներեց Անահիտ Գալստյան- 2019 թվականի մարտի 28,

7) Անհատ ձեռներեց Վահե Սեդրակյան- 2019 թվականի մարտի 29,

8) <<Դոմինիկա>> Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն -2019 թվականի մարտի 29

9) <<Պրեմ ՍՏԵՆԴ>> Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն - 2019 թվականի մարտի 29

10) <<Նիկո Ինտերթեյմենտ>> Սահմանափակ .պատասխանատվությամբ ընկերություն -2019 թվականի մարտի 29

11) <<Ծաղկաձորի գրողների ստեղծագործական տուն>> փակ բաժնետիրական ընկերություն -2019 թվականի մարտի 29

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ